Հոկտեմբեր.

Ի հոկտեմբեր ամսոյ, արժան է զերկրորդ այգեկիթքն 'ի յայս ամիս արասցես. ուստի և իմասջիք զմեր այգեկթոց խալատն[1], որ սահմանէ որ յայս երկք ամիս, յամեն ամիս հետ մի կըթեն. յոգոստոս զկաւիսեկ հասածն. և 'ի խաչին ամիսն զայլ 'ի հետն, և 'ի սուրբ Գորգին ամիսն զճուռն. և այս պատճառանոքս մեծ զէն կու լինի, զորս արժան է ուղղել՝ թէ հնար ինչ իցէ։ Բայց առաջին կիթն անուշ և կակուղ լինի, և ճուին՝ պինտ և օգտակար ստամոքսին յոյժ։

Եւ են ոմանք որ զնոր տնկերն յայս ամսոյս ԺԵ աւուրն 'ի վեր սկսանին տընկել մինչև 'ի դեկտեմբերի քսան օրն, որ բազմաստղն[2] ընկնի. և ամենեքին յայս հաւանեցան՝ որ տնկուի նոր տնկերն. վասն այսորիկ արձակեն ըզմազմզուկքն և զտակուիճքն մինչև 'ի յանձրևաց 'ի դալն, և տեղի առնուն որ երբ գարունն գայ՝ զտերևքն արձակեն և արմատ առնուն։ Եւ տնկոցն շուրջանակի փորել է պարտ, և մարդոյ հին աղբ և հին գոգ, և չոր գինէմիուր է պարտ ածել, և յերդ[3]; և փորձով լաւ է որ զերդ կթեն՝ մինակ յօտեն զայդին, և հետ յօտելոյն վաստկէ որ զկոխած գետինն կակղացնէ, որ յառաջի անձրևն աղէկ մտանէ, և զամռան ծարաւն հանէ 'ի սրտէն, և զգարնանային խոտքն պակասեցուցանէ։ Եւ այս հոկտեմբեր պարտ է զայս հաւանեալ ծառքս տընկել. ձիթենի, եղջիւրենի, սոնոպրի, բևկի, և այլ ամենայն ծառ անսերմն զինչ որ լինի՝ զայս ամիս անպատճառ 'ի հողն դիր, նա աղէկ բուսնի և անարդալ։ Եւ յայս ամիս է պարտ գաղէկ աղգ ձէթն 'ի պտղոյն հանել, և ընտրէ զայն պտուղն որ խաժ գունով լինի և չլինի 'ի մէկ տեղ սեացեալ. զայնոր ձէթն հան ուտելոյ, զի այն է լաւն և գովելին։ Եւ յայս ամիս է պարտ ըզթուրընճիքն և նումայիքն[1] և լիմոյիքն ծածկել. և ջրառվնին[2] զորդել որ ջուր չնստի 'ի վերայ կամ եղեմն և չորացընէ։ Այլ զլիմոնի ծառոց ճուղքն փաթտէ և զտերևքն 'ի վերայ զորդէ՝ որ ծածկէ զծառն, զի անահ լիցի 'ի պարզկային[3] ցրտոյն։ Այլ և առ զթթենոցին ցողունն և այրէ, և առ լից ծառի տակներն, որ այլ բնաւ չվախէ 'ի պարզկայէն. ապա տես աղէկ որ շատ չնուա, թէ ոչ՝ չորցնէ՝ վասն իր առաւել տաքութեանն. ապա լից և փորձէ, ազնիւ է և լաւ. ամենայն հով իրաց մոխիր առաւել տաք է փորձով։ Նոյնպէս և զմիրգանկքն որ այլ յետոյ գրեցաք՝[4] այս ամիս է պարտ դնել 'ի սնտուկն և պահել ձմեռան համար, որպէս գրեցաք։

Նոյնպէս և զհիլիոնոցեր սրբել և ստածել. և շատք այն են որ զիւրեանց հերկերն շինել և պարել կու լինին, և 'ի հոկտեմբեր ցանեն. որ թէ լինի որ հետ ԺԴ աւուրն անձրև գայ մէկ հետ՝ լաւ է, բայց թէ չգայ՝ չքննէ. վասն այնոր երբ գայ լաւ է և աղէկ։ Բայց յառաջ քան զհոկտեմբերի մուտն չէ արժան իրք ինչ 'ի հունդերաց ցանել, զի պիղծ է. և տես աղէկ որ երբ աստղն որ անուանեալ կոչի փքէ՝ որ է . . . . . ընկնի, ապա ցանես, նա խիստ ազնիւ լինի և լաւ։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

ԱՂԱԻՆԻ

ԺԹ

Վիրաբոյժը քիչ մը ուշ հասաւ. որովհետև ճամբան դիպուած մը անցեր էր գլխէն։ Ճիոգանդոյ Գասդրիգոնի հանդիպելով իրեն, բռնադատեր էր երթալու հոգալու վիրաւորեալ մը. ուստի տարեր էր Օրսոյի քով և վերքը պա-

1 Խառնակութիւն, սխալ։
2 Համաստեղք սայլին։
3 Յարդ։

1 Նարնջենի կամ կիտրոնի։
2 Աւուք ջրոց։
3 Ասպ։
4 Ի սեպտեմբերի ամիս. տես երես 276։